15 փետրվարի 2019 թվականի N 136 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N 2249-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ, 56-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ ու 5-րդ հոդվածների և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի, 34-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնողի գյուղական համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Շնողի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 2249-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման 2-րդ կետում՝

ա. «933,67» թիվը փոխարինել «933,78» թվով,

բ. «152,18» թիվը փոխարինել «152,29» թվով.

2) որոշման 3-րդ կետի՝

ա. «ա» ենթակետում «933,67» թիվը փոխարինել «933,78» թվով, «107,35» թիվը՝ «107,46» թվով,

բ. «բ» ենթակետում «1657,74» թիվը փոխարինել «1657,63» թվով.

3) որոշման N 4 հավելվածի «Բնակավայրերի» տողի՝

ա. «ընդամենը» սյունակում «152,18» թիվը փոխարինել «152,29» թվով,

բ. «որից՝ չմասնավորեցվող» սյունակում «50,64» թիվը փոխարինել «50,75» թվով,

գ. «Պետական սեփականություն հանդիսացող հողերը» սյունակում «0,41» թիվը փոխարինել «0,30» թվով.

4) որոշման N 4 հավելվածի «Ընդամենը» տողի՝

ա. «ընդամենը» սյունակում «933,67» թիվը փոխարինել «933,78» թվով,

բ. «որից՝ չմասնավորեցվող» սյունակում «107,35» թիվը փոխարինել «107,46» թվով,

գ. «Պետական սեփականություն հանդիսացող հողերը» սյունակում «1657,74» թիվը փոխարինել «1657,63» թվով.

5) որոշման N 6 հավելվածում՝

ա. «053-008» տողից հետո հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

053-012	0,11								արվեստի դպրոց

»,

բ. «ընդամենը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Ընդամենը	152,29	3,61	0,13	3,64			1,28		

».

6) որոշման N 7 հավելվածից հանել հետևյալ տողը.

«

053-012	0,11								դպրոց

».

7) որոշման N 7 հավելվածի «ընդամենը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Ընդամենը	0,30		1,48	14,33		1632,64	8,88		

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ